

Ուրիշ պարագայ մը կայ Աշտարակե-
ցւոյն կանոնաց մէջ: «Չեռնադրոշիւն ոք
արջառոց մի՛ իշխեսցէ առնել», կ'ըսէ նա
(Իէ): Հին ժամանակ հիւանդաց ու դիւա-
հարաց վրայ ձեռք կը դնէին բժշկելու
համար: Պիտի տեսնենք մեր դիւաց ներ-
գործութիւնը նաեւ կերակրոց վրայ՝ գոր-
ծիս վերջին մասին մէջ: Կը հետեւի ու-
րեմն՝ որ այդ ձեռնադրութեան նպատակն
էր դիւական ախտերն եւ անսրբութիւնքը
հալածել անասնոյն միջէն: Եւ «արջա-
ռոց» կ'ըսէ՝ ցուցնելու համար զենլին իսկ,
որպէս զի որ եւ է հիւանդ անասնոյ մա-
սին չհասկանանք: — Անսովոր ու բըռ-
նազրօս է Հ. Չամչեանի սոյն «ձեռնադրու-
թեան» տուած մեկնութիւնը՝ թէ «Քահա-
նայք մի՛ իշխեսցեն երթալ եւ ընտրել ըստ
հաճոյս իւրեանց զարջառ վասն ողորմու-
թեան նուիրաց» (Չմչ. Բ, 238):

Բ. Իսկ տան պաշտօնն էր «Աւրհնու-
թիւն սեղանոյ տեսոնականի եւ պատա-
րագի» զոր ունի վերոյիշեալ հին Մաշ-
տոցը, կատարելի ուտելէ յառաջ՝ փոխան
սովորական սեղանօրհնէից: Եւ որովհետեւ
իւր բովանդակութեամբ աւելի հոգեհան-
գըստեան յատուկ կը թուի, անոր նկա-
րագրին մէջ պիտի տեսնենք զայս. թէպէտ
յայտնի է՝ որ մի միայն լինելով, պարզ